

## ՏԱԿԻՐԻԿԵԱՆ ՆԱՅԱԳԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

Հայերը ներկայումս Տաւրիկեան նահանգում ունեն ուշադիմարան, որոնցից ութը լուսաւորչական, երկուսը կաթոլիկ և մէկը գրագիտութեան դպրոց:

Սրանց մասին մահրամասն տեղեկութիւններ գտնելը շատ դժուար է, որովհետեւ պաշտօնական հրատարակութիւններում չատ քիչ բան է յիշում. բայց այս՝ ոչ ամեն դպրոց պահած ունի հին տարիների «գործերը» և մատեանները, որ կարելի լինէր նրանց միջոցով ծանօթանալ ուսումնարանի անցեալի հետ \*):

Չը յուսալով անգամ, որ իմ ներկայացրածը 11 դպրոցների լրիւ պատկերը կարող է լինել, կարծում եմ, թէ այսքանն էլ իսկի չեղածից լաւ է: Ամենքս էլ զիտենք, թէ ինչ էր մի ժամանակ Դրիմը մեզ համար, որքան էինք մենք և ինչ տեղ էինք բռնում այնաեղ. միևնույն ժամանակ հայերի ներկայ վիճակը այս թերակղուու վրայ համարեա բոլորովին անձանօթ է մեր հասարակութեանը, որովհետեւ տարեկան 4—5 թղթակցութիւն մեր թերթերում չի կարող բաւականութիւն տալ եղած պահանջնն: Իսկ թէ պահանջ կայ, այդ կարծեմ առկացոյցի կարու չէ:

\* Մեր մամուլն էլ համարեա իսկի չի խօսել նրանց մասին. միայն 1872 թ. «Արարատի» մէջ լոյս տեսաւ մի «Համառօտ տեսաւթիւն Խըմու և Պեսարապիոյ քանի մի հոգևոր ծխական գլորոցաց ներկայ դրութեանը» Գ. Տ. Մ. Ա. ստորագրութիւնով (Էջ 291, 333, 371, 411), որին նախայդ թւին գուրս եկաւ և «Պատասխան» (Էջ 490): Հոգևոր վարչութեան 1889 թ. հրատարակած «Վիճակագրութեան» մէջ տեղ չէին գտել այս նահանգի դպրոցները: Յօդուածս կազմելիս օգտուել եմ երկու պաշտօնական հրատարակութիւններից—„Օբայ очеркъ состояния нар. учил. Тавр. губерніи“ և „Календарь и Памятная книжка Тавр. губ.“ զանազան տարիների:

Հայերը դպրոցներ ունեն Սրմեանսկում, Եւպատորիայում, Թէոդոսիայում, Կերչում, Հին-Ղրիմում, Ղարասու-Բաղարում՝ երկու (մինը կաթոլիկների), Մելիտոպոլում, Սիմֆերոպոլում երկու (մէկը կաթ.), և մէկ գրադիտառնեան դպրոց ձումա-էլիում (թէոդոսիայի գաւառ), որ բացուեց 1902 թ. աշնանը՝ Ուսումնարանները կառավարում են հոգաբարձուների ձեռքով:

Տասը դպրոցներում 1901—2 ուսումնարանական թւա-կանին եղել է 308 աշակերտ (173 մանչ + 135 ազջ.): Միջին թւով իւրաքանչիւր ուսումնարանին ընկնում է 31 աշակերտ, աղջիկ-ները՝ կազմում են ընդհանուր թւի 44%—ը:

Դրանից 11 տարի առաջ (1891—2 ուս. թ.), ըստ դիրեկ-տորի՝ տեղեկութիւնների՝ եղել է 377 աշակերտ (214 + 163), աղջիկները կազմել են 47%։ մի տասնամեակի ընթացքում ու-սանողների ընդհանուր թւիը պակասել է 69—ով, աղջիկների 0%—ը իջել է 3—ով. բերածն թւերը աւելի խտացած նշանակու-թիւն են ստանում, եթէ աչքի առաջ ունենանք, որ չը գի-տենք ինչու դիրեկտորի տեղեկութիւնների մէջ 1891—2 թւա-կանին առաջ է բերում միայն 8 դպրոց։ Այս թերութիւնը երեխ առաջացել է այն պատճառով, որ հայոց դպրոցներն այն ժամանակ գեռ չէին անցել ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան ձեռքը, ապա և ուսումնարանների հաշւե-արութիւնը կատարում էր անկարգ:

Ինչից է առաջ դպրիս աշակերտաների թւի պակասելը հա-յոց դպրոցներում։ Պատճառները բազմազան են. նրանցից մի-այն մէկ-երկուաը ցոյց կը տանք պատեղ։

Սմենից առաջ պէտք է լիշել հայ աղդաբնակչութեան աս-տիճանաբար պակասելը նահանգում։ Օրինակ առնենք մերձա-ւոր անցեալ տարիները. 1896 թիւն Տաւրիկեան նահանգում հայ-լուսաւորչականների թիւն էր 8667 (4666 + 4001), իսկ ար-դէն 1902 թիւն—8249 (4634 + 3615). Բնական է, որ այդ պա-կասորդ 410 հայերի թւում են նաև պակասորդ աշակերտները։

Մեր դպրոցներն աշակերտներից զրկող պատճառներից մէկն էլ (և գլխաւորը) աւելի բարձր զարգացման պահանջի ա-ձեկն է. Մի ժամանակ հայ դպրոցը լրիւ բաւականութիւն էր տալիս հայ ծնողի պահանջներին. հաշւեմատեանները զրում էին հայերէն. առետրական գործերի մէջ անհրաժեշտ էր թւա-բանութիւնը, այդ էլ կար ծխական դպրոցներում և նոյնպէս հայերէն լեզուով։ Ծնողը զիտէր, որ ուսումը շատ էժան է այնտեղ և դիւրամատչելի, որովհետեւ ամեն ինչ հայերէն է ա-ւանդուում։

Այնինչ ներկայումս հաշվաները գրում են ոռուսերէն, թւարանութիւնը հայոց դպրոցում ոռուսերէն է աւանդւում, ուրեմն էլ ուսուաց ուսումնարաններում այնքան թանգ չէ: Բայց այդ՝ հայ ծնողը սկսեց հասկանալ ուսման, զարգացման գինը. ծխական դպրոցը և շատ անգամ էլ բաղաքային ուսումնարանը նրան չեն բաւականացնում, նա աւելի բարձրն է նայում:

Դրիմցի հայը իր աղջկանը համեմատաբար աւելի բարձր կրթութիւն է տալիս, քան որդուն. զիրեկաորի տարեկան հաշվաներից տեսանք, որ մեր նահանգի հայ դպրոցներում ուսունող աշակերտունների  $\frac{0}{0}$ -ը աշակերտաների  $\frac{0}{0}$ -ից ցած է: Գիմնազիական զիպլոմը մեզ մօտ օժիտ է, որ դաշնամուրի վրայ ածել իմանալու հետ մէկտեղ բարձրացնում է օրիորդի արժանիքը փեսացուի աշքում: Ան աղջիկը զիմնազի խալսիլ է, փոռթուփեսն չալել գիտէ...»

Դամանք այժմ ուսումնարանների նիւթականին:

Եկամուտի աղբիւրներն են՝  $\frac{0}{0}$  դրամագուկներից, դպրոցապատկան չէնքերից եկամուտ, դրամական օժանդակութիւն Հոգեոր Վարչութիւնից, թօշակադրամ և մասնաւոր աղբիւրներ՝ թատրոն, պարահանդէս...

1901—2 թւականին 10 դպրոցների եկամուտն է եղել 11039 ր., իւրաքանչիւրինը միջին թւով 1104 ր.: Ընդունենք, որ տարուայ ընթացքում բոլոր եկամուտն է ծախսուած, և պէտք է ասել, չափազանցութիւն արած չենք լինի. կան դրաբոցներ, որոնք մինչեւ անգամ գեփիցիտ էլ են ունենում, ինչպէս օրինակ Սիմֆերոպոլի դպրոցը երկու տարուայ ընթացքում ունեցաւ 480 ր. գեփիցիտ: Ամեն մէկ աշակերտի վրայ ծախս է լինում 36 րուբլի. սա չը պէտք է շատ համարել, այլ միջակ ծախս: Բայց արի ու տես, որ նա չափազանց մեծ է դառնում, եթէ աչքի առաջ ունենանք, որ հայոց դպրոցները շատ քիչ աւարտող են տալիս: Ծնողը շատ դէպքերում չի թողնում, որ իր զաւակը աւարտէ ուսումնը. նա բաւականանում է առաջին կամ երկրորդ ուսումնարանական տարովը, ապա աղքատ ծնողն իր տղին տալիս է ծառայելու, ունենորը՝ զիմնազիոն կամ բէալական դպրոց:

1897 թ. նահանգիս բոլոր հայ ուսումնարաններում աւարտել են 14 աշակերտ ( $7+7$ ), 1899-ին 8 աշակերտ... Եթէ միջին թիւ ընդունենք 10 աշակերտ (որ շատ է իսկապէս) և դնենք, որ տարեկան ծախս է եղել 11,000 ր., դուրս է գալիս ամեն մէկ աւարտող արժեկ է հասարակութեանը 1,100 ր.!.. Քիչ չէ!

Թողնենք այս, դառնանք ուսուցիչներին, տեսնենք՝ բաւականաչափ վարձատրւում են նրանք, թէ ոչ:

Նոյն 1901—2 թւին դպրոցներում և զել են՝ 8 կրօնուսոյց, 12 ուսուցիչ և 10 ուսուցչուհի, ընդամենը 30 պաշտօնեայ: Տեղեկագրի մէջ չէ յիշուած, թէ ամեն մի ուսումնարան որքան է ծախսել ուսուցիչների վարձատրութեան համար, այլ տրուած է ուսումնարանների տարեկան եկամուտը միայն:

Վերեռում մենք ասացինք, որ իւրաքանչիւր դպրոցի վրայ ծախսուած է 1104 ր., ընդունեցէք, որ վարչութիւնները եկամուտը լիովին էլ ծախսել են: Եթէ հասարակ, տնտեսական ծախս է եղել իւրաքանչիւր ուսումնարանի վրայ 120 ր., դա անում է 10-ի համար 1200 ր., ուրեմն ուսուցիչների վարձատրութեան համար ծախսուած է 9839 ր., իւրաքանչիւր պաշտօնեային՝ 326 ր., որը՝ ինարկէ՛ շատ չնչին գումար է: Այս են ցոյց ասլիս միջին թւերը:

Եթէ այժմ գառնանք ամեն մի ուսումնարանին առանձին-առանձին, կը տեմնենք, որ այսպէս էլ թւանշանները միփթարական շատ քիչ բան են ասում: Սրմեանսկում ոռւսաց լեզուի ուսուցիչը ստանում է 300 ր., հայոց լեզուինը՝ 250 ր. (եկամուտը՝ 800 ր.): Սիմֆերոպոլի ուսումնարանում ոռնիկները բաւականացուցիչ են, որովհետև ուսումնարանն էլ հարուստ է (տարեկան եկամուտ 4293 ր.): Այստեղ աւագ ուսուցիչը ստանում է 1000 ր., ուսուցիչներից մէկը 700 ր., միւսը 600 ր., ուսուցչուհին էլ 600 ր.: Կերչի ուսուցիչ ամսականն է 30 ր., Եվպատորիայում տարեկանը 400 ր., Ղարասու-Բազարում՝ 500 ր.:

Այստեղ աւելորդ չենք համարում յիշել Հին-Ղրիմի հայ հասարակութեան տմարդի վերաբերմունքը գէպի իր ուսուցիչը, սա տեղում ծառայել է ամբողջ 22 տարի, սկզբում ստանալիս է եղել ամսական 50 ր., որը մի քանի տարի առաջ դարձնում են 40 ր. այս տարի էլ նոր հոգաբարձուն իր սրբազն պարտքն է համարում մի պատառ էլ ինքը խիել վաստակած ուսուցիչ բերանից, մի ուսուցչի, որ ծանրաբեռնուած է ընտանիքով: ամսականը դառնում է 30 ր... Այսպէս շարունակելով գուցէ գայ մի ժամանակ, երբ ուսուցիչը գեռ իր գրպանիցը փող կը գնէ աղաների առաջ՝ Հին-Ղրիմում ուսուցիչ լինելու պատվիցը չը զըրկուելու համար... Ի՞նչ չը տուող Աստուած է... Նոյն Հին-Ղրիմում ոռւսաց լեզուի ուսուցչուհին ստանում է միայն 20 լրուրի ամսական...»

Ոռնկի այսքան փոքր լինելը՝ ինարկէ՛ ունի իր հետեանք-ները, բնական է, որ չնչին վարձատրութիւնով լաւ ուսուցիչ գտնելը միայն պատահական գէպը պէտք է համարել: Բացի այդ՝ ուսուցիչները շուտ-շուտ փոխուում են, և այս չի կարող բացասապէս չ'ազդել ուսման կանոնաւոր ընթացքի վրայ:

Լաւ ապրանքը թանգ արժէ, լաւ ուսուցիչը իրան համեմատ վարձարութիւն կ'ուզէ, ինդիրը աւելի բարզւում է նըրանով, որ Դրիմի՛ համարեա բոլոր քաղաքներից ուսուցիչ հրաւիրելիս պայմանների մէջ մէկ քանի «ցանկալի է» են աւելացընում: Այսպէս՝ Ղարասու-Բաղարում հայոց լեզուի ուսուցիչը միենոյն ժամանակ և մատենադարանապետ է, պէտք է նոյնպէս եկեղեցում խմբապետութիւն անէ: Արմեանսկում հայերէնի ուսուցիչը խմբապետ է, ոռւսաց լեզուինը՝ տիրացու... Թէոդոսիայում հայերէնի ուսուցիչը խմբապետ է, Կերչում... դպիր:

Ինչ ասել կ'ուզէ, որ պաշտօնների այսպիսի խառնուրդը նորմալ համարուելու չէ՝ մէկը միւսին խանդարելու պատճառով: Պատահում է այսպիսի դէպը.

Արմեանսկում՝ ինչպէս ասացինք, ոռւսաց լեզուի ուսուցիչը տիրացու էլ է: Զատկին և Ծննդին քահանան (գպրոցի կրօնուսոյցը) տիրացուի հետ շրջում է Պերեկոսի ամբողջ գաւառը, որովհետեւ գաւառում միայն մէկ եկեղեցի կայ: Այս ճանապարհորդութեան վրայ գնում է 2—3 շաբաթ ամեն անգամ, և այս իհարկէ՝ չի կարող չ'ազդել ուսման վրայ: Տարին մէկ քանի անգամ էլ պատահում է, որ նրանց հրաւիրում են մօտիկ ու հեռաւոր գիւղերը, մինչեւ անգամ Մելիտոպոլ:

Իվերչոյ գնում ենք 10 դպրոցների մտախ վիճակագրական տեղեկութիւններ՝ քաղած պաշտօնական աղբիւրներից („Свѣдѣнія объ учебн. зав. и именной списокъ начальн. учили. Тавр. Дирекціи нар. учили.“ 1903 г. Симферополь): Տեղեկութիւնները տրուած են յունուարի 1902 թ.:

Դ Պ Բ Ո Ց	ՊԱՀՏՈՆԵԱՑ			ՈՒՍՏԱԾ		ԵԿԱՄՈՒՏ
	Քան.	Ուսուցիչ	Վայրեալիք	Մանկ.	Աղմիք	
Սիմֆերոպոլի հայ-լուսաւորչ.	2	4	2	42	39	4293 ր.
» հայ-կաթոլիկոների	1	1	2	22	8	591 »
Ղարաբաղ-Բաղարի հայ-լուս.	»	1	1	20	20	1320 »
» հայ-կաթ.	1	1	1	10	7	760 »
Եւլատորիայի հայ-լուսաւորչ.	»	»	1	10	5	610 »
Թէոդոսիայի հայ-լուսաւորչ.	1	»	1	9	18	700 »
Հին-Ղրիմի հայ-լուս. . . . .	1	1	1	23	17	765 »
Կերչի հայ-լուս. . . . .	1	1	»	23	8	500 »
Արմեանսկի հայ-լուս. . . . .	1	2	»	5	7	800 »
Մելիտոպոլի հայ-լուս. . . . .	»	1	1	9	6	700 »

Վ. ԲԱԲԻԵԱՆ